ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 543
12 դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 132-Ա—134-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 132-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑ 3/20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՃԱՇԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. թիվ 88, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով,հիմք ընդունելով <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ն կողմից կազմված հողի և շինության հատակագծերը և հաշվի առնելով,որ 1995թ. նշված շինությունը օգտագործվում է որպես բազմաբնակարան շենք՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-045-0047-0004 ծածկագրով Թումանյան համայնք,գ.Լորուտ,փողոց 3, շենք 20 հասցեում գտնվող 0.19755 հա մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի գործառական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս:

2.0.19755 հա հողամասի վրա գտնվող 547.3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինության /ճաշարան/ գործառական նշանակությունը փոխել որպես բնակելի շինություն՝ բազմաբնակարան շենք:

3.Նշված շինությանը տրամադրել հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Լորուտ, փողոց 3, շենք 20:

4. 547.3քմ մակերեսով շինությունը չի խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չի դասվում ՀՀ <<<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:
5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 133-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԻՐԵՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ)ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի գրությունը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի հանձնարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականը մարզպետներին, ՀՀ Լոռու մարզպետի 04.08.2017թ. թիվ 101/111.4/3880-17 գրությունը և Թումանյան համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 7-ի N 38-Ա որոշումը՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Քարինջ գյուղի Մերուժան Եղինյանի փողոց թիվ 12/1 և Լորուտ գյուղի 11 փողոց թիվ 1/1 հասցեներում գտնվող եկեղեցիների շենքերը իրենց սպասարկման և պահպանության հողամասերով անհատույց /նվիրատվության կարգով/ օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:
2.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող եկեղեցիները հանել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկից:
3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 134-Ա

ԱՐՇԱԿ ԿՈԼՅԱՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ԵՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետով,Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի և 77 հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Արշակ Մաթևոսյանի կողմից լիազորված անձ Աստղիկ Էվոյանի 2017թվականի դեկտեմբերի 11-ի հողամասից հրաժարվելու մասին դիմումը՝ որոշում եմ.

1.Սեփականության իրավունքով Արշակ Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղնշանակության 0,509 հա վարելահողը՝(ծածկ. 06-012-109-00001, վկ.816484 տրվ.26.05.2001թ.) և 2,184 հա խոտհարքը (ծածկ.06-012-109-000048,վկ.816562 տրվ. 26.05.2001թ.) ճանաչել համայնքային սեփականություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի մասնագետ Էդգար Պետրոսյանին 15-օրյա ժամկետում դիմել ՀՀ ԿԱ ԱԳ ՊԿ Լոռու մարզային ստորաբաժանում,սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3.Հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ՉԱՎԱՐՅԱՆ**